ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարին կից հասարակական խորհրդի առաջին նիստի արձանագրություն

27.03.2026

Խորհրդի նիստի անցկացման վայր՝ Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Խորհրդի նիստի սկիզբը՝ ժ. 13:00
Խորհրդի նիստի ավարտը՝ ժ. 15:00
Մասնակցեցին՝

Մխիթար Հայրապետյան	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար
Գևորգ Մանթաշյան	Նախարարի առաջին տեղակալ
Ռուբեն Սիմոնյան	Նախարարի տեղակալ
Մարթա Սանդոյան	Նախարարի խորհրդական
Արամ Խաչատրյան	«Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ» (ՀՄԴ)
Սարգիս Կարապետյան	«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ
Միեր Մարկոսյան	«ՀՀ ռազմաարդյունաբերական ձեռնարկությունների միություն» ՀԿ
Գևորգ Առաքելյան	«Ինժեներական Ասոցիացիա» ՀԿ
Բեկոր Փափազյան	«Սիմոնյան» կրթական հիմնադրամ
Վահե Տոռոզյան	«Կոդուլեյթ» ՍՊԸ
Տիգրան Գասպարյան	«Տեխ սերվիսես» ՍՊԸ
Ահարոն Ահարոնյան	«Ռուս-հայկական (սլավոնական) համալսարան»
Հայկ Կարապետյան	«ԱրմԴրոն համայնք» ՀԿ
Լիլիթ Մուրադյան	Ֆիզիկական անձ
Տիգրան Ստեփանյան	Ֆիզիկական անձ
Հարմիկ Ազարյան	Ֆիզիկական անձ
Արթուր Կարապետյան	Ֆիզիկական անձ

Բացակա մասնակից՝

Էդուարդ Մուսայելյան	«Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների գործատուների միություն» (ԳՄ)

Օրակարգ

Թեմաների ներկայացում՝

«Երեխաների առցանց անվտանգություն», խնդիրները և լուծման հնարավոր ուղիները

«Սինթետիկ մեդիայի մասին» ՀՀ օրենքի նախագիծ

«Կիբեռանվտանգության ոլորտում կիրառելի միջազգային ստանդարտների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (չզեկուցված)

Ելույթ՝

Ողջունելով անդրանիկ նիստի մասնակիցներին՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար (այսուհետ հասարակական խորհրդի նախագահ) Մխիթար Հայրապետյանը շնորհակալություն հայտնեց հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար և մաղթեց արդյունավետ քննարկում: Նա ընդգծեց, որ ՀՀ Կառավարության այս որոշումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն Կառավարության, այլև ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ նախարարություն) համար՝ հաշվի առնելով նման ձևաչափերով խորհդրի գործունեության անհրաժեշտությունը: Նախարարը կարևորեց հանրային տարբեր շերտերի մասնակցությունը և ներառականությունն՝ երկրի համար կարևոր քաղաքականությունների ու ռազմավարական որոշումների մշակման գործընթացում՝ նշելով, որ ներգրավված են ոչ միայն տեխնոլոգիական ընկերություններն ու միությունները, այլև ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ նախարարության լիազորությունների շրջանակում:

Քննարկման թեմաներն ընտրվել էին Նախարարության համար առաջնահերթ և հանրային հետաքրքրությունն ներկայացնող ուղղություններից:

Նախարարը նշեց, որ խորհրդի հետագա աշխատանքները ևս կանցկացվեն առցանց՝ թափանցիկությունն ապահովելու և հանրության տարբեր կարծիքներ, առաջարկներ, ու դատողություններ հավաքագրելու նպատակով, որոնք կդառնան նախարարության քննարկման առարկա: Նախարարը ներկայացրեց օրակարգային առաջին հարցը, որը վերաբերում է մինչև 17տ երեխաների առցանց անվտանգության ապահովմանը՝ առաջարկելով նախարարի խորհրդական Մարթա Սանդոյանին ներկայացնել սահիկաշարը:

Մարթա Սանդոյանը նշեց, որ իրականացվել է համապատասխան ուսումնասիրություն՝ հիմնվելով ՅՈՒՆԻՍԵՖ-ի տվյալների, ԵՄ տարբեր զեկույցների և գործընկեր գերատեսչությունների տրամադրած տեղեկատվության վրա: Մինչև 17 տարեկան երեխաների առցանց անվտանգությունը հանդիսանում է առաջնահերթ խնդիր, քանի որ նրանք

ակտիվորեն օգտվում են համացանցից՝ սոցիալական հարթակների, խաղերի և տեսանյութերի միջոցով: Չնայած համացանցը կարևոր կրթական և հաղորդակցման գործիք է, ուսումնասիրությունները ցույց են տալիս նաև առկա ռիսկերը՝ կախվածություն, ուշադրության շեղում, ինչպես նաև բռնության ու շահագործման դեպքեր: Այդիսկ պատճառով ընդգծվեց պետական մարմինների, միջազգային կառույցների և գործընկեր կազմակերպությունների համագործակցությամբ համակարգված աշխատանքի անհրաժեշտությունը՝ երեխաների պաշտպանությունն ու թվային անվտանգությունն ապահովելու համար: Նախարարության իրավասությունների շրջանակում, նախարարի համակարգմամբ ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ: Միաժամանակ կնքվել է եռակողմ հուշագիր՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության և «Իզմիրլյան» բարեգործական հիմնադրամի միջև՝ մինչև 17 տարեկան երեխաների առցանց անվտանգության ապահովման ուղղությամբ աշխատանքների համակարգման և արդյունավետ կազմակերպման նպատակով:

Հաջորդեց հարցուպատասխան:

Արթուր Կարապետյանը հարց բարձրացրեց երեխաներին տարբեր խաղային և սոցիալական հարթակներին (օրինակ՝ Roblox, Snapchat) միանալու հրավերների խնդրի տարածման մասին: Նախարարն արձագանքեց, որ այս ոլորտում տեխնոլոգիական ընկերությունների հետ ընթացող երկխոսությունները նպատակ ունեն ներդնել ինքնակարգավորման մեխանիզմներ, այդ թվում՝ վերահսկողության, ինքնաարգելափակման, և ծնողներին ծանուցման գործիքներ՝ ընդունելի ստանդարտներին համապատասխան: Հավելեց, որ այս ուղղությամբ արդեն ընթանում են բանակցություններ միջազգային գործընկերների հետ:

«Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ»-ի ներկայացուցիչ **Արամ Խաչատրյանը** նշեց, որ առցանց ակտիվության տարիքային շեմը կարելի դիտարկել ավելի ցածր՝ սկսած 3+ տարիքից, քանի որ նրանք ևս օգտվում են համացանցից: Նախարարի խորհրդական տիկին Սանդոյանը պարզաբանեց, որ ընտրված տարիքային շեմը հիմնված է միջազգային մեթոդաբանությունների և զեկույցների վրա, իսկ 3+ տարիքային խմբի դեպքում առաջնային պատասխանատվությունը՝ ծնողներինն է: Նախարարը հավելեց, որ ավելի ցածր տարիքային խմբի հարցը նույնպես կքննարկվի գործընկերների հետ և ընդգծեց ծնողական վերահսկողության գործիքների կիրառման կարևորությունն՝ օրինակ բերելով «Google Family link» հավելվածը և նման այլ հավելվածներ:

ԱՏՁՄ գործադիր տնօրեն **Սարգիս Կարապետյանը** նշեց, որ աշխատանքը հարկավոր է հիմնականում ուղղել ծնողների իրազեկմանն ու կրթությանը, քանի որ խնդիրն ոչ միայն տեխնոլոգիական է, այլև ծնողների պատասխանատվության հարցն է: Առաջարկեց կազմակերպել երեկոյան դասընթացներ՝ ծնողներին կրթելու, թվային հարթակներից ճիշտ օգտվելու համար: Նաև նշեց առցանց նույնականացման գործիքների բացակայության խնդիրը՝ նշելով, որ հաճախ հնարավոր չէ հստակ պարզել, թե ով է օգտվում հարթակից: Նախարարն արձագանքեց, նշելով, որ Հայաստանի հեռահաղորդակցության երեք օպերատորների հետ քննարկումների արդյունքում տեղեկացված է նման նույնականացման տեխնոլոգիաների առկայության մասին:

«ՀՀ ռազմաարդյունաբերական ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի ներկայացուցիչ **Միեր Մարկոսյանը** նշեց, որ ցանկացած սահմանափակում հաճախ հանգեցնում է երեխաների կողմից շրջանցման լուծումների որոնմանը, և առաջարկեց, որ պետությունն առավել կենտրոնանա համապատասխան բովանդակության վերահսկման, ինչպես նաև ճիշտ ուսումնական ծրագրերի մշակման վրա:

Տիգրան Ստեփանյանն առաջարկեց 0-6 տարիքային խմբի համար ընդհանրապես սահմանափակել համացանցի և թվային հարթակների օգտագործումը՝ միաժամանակ կարևորելով ծնողների իրազեկվածության բարձրացումն և կրթումը:

Նախարարի տեղակալ **Ռուբեն Սիմոնյանն** արձագանքեց, որ ժամանակակից պայմաններում թվային գործիքների և, մասնավորապես, արհեստական բանականության կիրառումը կրթության մեջ անհրաժեշտությունն է, և դրանք պետք է դիտարկել նաև ուսուցողական բովանդակության և խաղերի տեսանկյունից: Նա ընդգծեց, որ այս գործընթացում առանցքային դեր ունեն ծնողները՝ ինչպես ճիշտ և անվտանգ բովանդակության ընտրության, այնպես էլ երեխաների կողմից թվային գործիքների օգտագործման ժամանակի վերահսկման հարցում:

«Արմդրոն Համայնք»-ի հիմնադիր **Հայկ Կարապետյանը** նշեց, որ խնդիրները հաճախ առաջանում են ուշադրության կենտրոնացման խաթարման հետևանքով, երբ խաղային միջավայրերը ձևավորում են կախվածության ռիսկեր: Նա ընդգծեց, համապատասխան միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը թե՛ երեխաների, և թե՛ ծնողների համար՝ շեշտելով ծնողների իրազեկումն և երեխաների հետ ճիշտ աշխատանքի հմտությունների զարգացումը:

Առաջարկվեց սոցիալական հարթակներում ակտիվ իրազեկման և գովազդային արշավների իրականացում, ինչպես նաև երեխաներին ներգրավել տարբեր ակտիվ խմբակներում:

Տիգրան Գասպարյանը նշեց ծնողների իրազեկվածության բարձրացման կարևորությունը, ինչպես նաև այլընտրանքային զբաղվածությունների՝ օրինակ սպորտի խթանումը, որպեսզի երեխաները չներգրավվեն միայն թվային միջավայրում իրականացվող զբաղմունքներում:

Արթուր Կարապետյանը նշեց, որ անկախ անվտանգ համակարգերի ներդրումից՝ տեղեկատվության մեծ հոսքի պայմաններում լիարժեք վերահսկողությունն ապահովելը դժվար է, ուստի անհրաժեշտ է փոխել մոտեցումն՝ երեխաներին ներգրավել նման քննարկումներում և հաշվի առնել նաև նրանց կարծիքը:

«Ինժեներական ասոցիացիա» ՀԿ-ի ներկայացուցիչ **Գևորգ Առաքելյանը** նշեց, որ օրինակ «Viber» հավելվածն օգտագործվում է նաև կրթական նպատակներով և առաջարկեց ստեղծել պետական այլընտրանքային հարթակ՝ կրթության և գիտության կիրառելի գործիքով, որը կունենա նաև վերահսկողության և բովանդակության ֆիլտրման մեխանիզմներ՝ օգտակար և ոչ օգտակար տեղեկատվությունը տարանջատելու համար:

Նախարարի առաջին տեղակալ **Գևորգ Մանթաշյանը** նշեց, որ անցած տարի մասնակցել է «Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն»-ի կողմից կազմակերպած «AI4teens» միջոցառմանը, որտեղ 12-ամյա երեխաներն արհեստական բանականության գործիքների վերաբերյալ ներկայացրել են այնպիսի դատողություններ, որոնք համընկնում են ներկայում քաղաքականության լավագույն լուծումների հետ: Այսինքն՝ գտնվելով նման բարենպաստ միջավայրում, այն նպաստում է երեխաների մոտ ԱԲ գործիքներից օգտվելու ավելի գրագետ ընկալմանը:

Նախարարն ամփոփելով օրակարգի առաջին հարցը, նշեց, որ երեխաների առցանց պաշտպանությունը հանդիսանում է առաջնահերթություն՝ թիրախավորելով ծնողներին մեդիա և կիբեռ-գրագիտության, ինչպես նաև առցանց գործիքներից օգտվելու հմտությունների զարգացման անհրաժեշտությունը: Նա հավելեց, որ աշխատանքային խմբերի գործունեության արդյունքներն ամփոփելուց հետո, դրանք կներկայացվեն և կկիսվեն հասարակական խորհրդի անդամների հետ:

Նախարարը ներկայացրեց նիստի երկրորդ հարցը՝ «Սինթետիկ մեդիայի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը, որը վերաբերում է արհեստական բանականությամբ

գեներացված բովանդակությանը: Նշեց, նման նյութերի և հաղորդումների տարածումը ԱԲ-ի զարգացմանը զուգընթաց առաջացնում են մարդու ինքնության խեղաթյուրման հնարավորություն: Նախարարը ընդգծեց, որ այս օրենսդրության ընդունումը նախարարության համար հանդիսանում է առաջնահերթ ուղղություններից մեկը և առաջարկեց նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մանթաշյանին ներկայացնել նախագիծը:

Գևորգ Մանթաշյանը նշեց, որ այս նախագիծը փոխկապակցված է նախորդ օրակարգային հարցի հետ, և նպատակ ունի պաշտպանելու հասարակության խոցելի խմբերին՝ ձևավորելով ավելի անվտանգ միջավայր: Նախարարի առաջին տեղակալը ներկայացրեց «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին նախագիծն, որով նախատեսվում է հեռարձակման պարագայում արհեստական բանականության գործիքներով ստեղծված կամ մշակված բովանդակության պարտադիր մակնշում: Հաջորդիվ ներկայացրեց «Սինթետիկ բովանդակության մասին» օրենքի նախագիծն, որն առավել համապարփակ կարգավորումներ է նախատեսում:

Նախարարը ընդգծեց, որ այս օրենքի առաջին փաթեթով փոփոխությունը բացառապես վերաբերում է տեսալսողական մեդիային և նպատակ ունի կարգավորելու առկա բացերը՝ ընդգրկելով հանրապետությունում հասանելի շուրջ 27 հեռուստա և ռադիոհեռարձակողներին: Նշեց, որ երկրորդ նախագծով նախատեսվում է կարգավորել ավելի լայն թվային հարթակների պատասխանատվությունը՝ համագործակցելով նաև միջազգային ընկերությունների հետ՝ (օր.՝ «TikTok», «YouTube», «Meta») հաշվի առնելով միջազգային փորձը («Եվրոպայի խորհուրդ», «ՅՈՒՆԻՍԵՖ», «OECD»):

Նախարարը նշեց, որ տարբեր երկրների փորձը ցույց է տալիս, որ քննարկումներ են ծավալվում «դիփֆեյքերի» դեմ պայքարի կիրառման, անձի ինքնության խեղաթյուրման արդյունավետ միջոցներ գտնելու համար:

«Թումո»-ի զարգացման գծով տնօրեն **Բեկոր Փափազյանը** հարց հնչեցրեց, թե ինչպե՞ս է կարգավորվելու ԱԲ-ի կիրառման տոկոսայնությունը: Նախարարն արձագանքեց, որ անհրաժեշտ է օգտագործման դեպքում հստակ նշել արհեստական բանականությամբ գործիքների կիրառման փաստը:

«Կոդուլեյթ» ընկերության տնօրեն **Վահե Տոռոզյանը** նշեց, որ արհեստական բանականությամբ զարգացմամբ պայմանավորված՝ սոցիալական հարթակներում կամ ցանցերում բովանդակության որակը հասել է բարձր մակարդակի, որով տարբերակելը դառնում է անհնար: Նախարարի առաջին տեղակալն արձագանքեց, որ արդեն իսկ

իրականացվել և շարունակվում են քննարկումները համապատասխան միջազգային հարթակների հետ:

Բարձրացվեց նաև ապատեղեկատվության կարգավորման և վերահսկող մարմնի առկայության հարցը: Նախարարը նշեց, որ օրենսդրությամբ համարվում է պատժելի, իսկ նոր օրենքի շրջանակում նախատեսվում է պատասխանատվություն՝ տեսալսողական մեդիայի տիրույթում՝ պարտադիր մակնշման պահանջը չկատարելու դեպքում:

Հարմիկ Ազարյանը բարձրացրեց հարց, որ ռադիոալիքներով հեռարձակվող ԱԲ-ով գեներացված ձայնային բովանդակությանն առնչվող հարցերը նույնպես կարգավորվեն օրենքով: Նախարարն արձագանքեց, որ այդ հարցերը կկարգավորվեն ենթաօրենսդրական ակտերով:

Արթուր Կարապետյանն առաջարկեց աշխատանքային օրենսգրքում նախատեսել դրույթ՝ ԱԲ գործիքների կիրառման թույլատրելիության վերաբերյալ, սահմանելով համապատասխան սահմանափակումներ:

Նախարարը նշեց, որ գործատուի պաշտպանության նպատակով համապատասխան կարգավորումների մշակումը կարող է իրականացվել փորձագիտական խմբի կամ այլ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ:

Տիգրան Գասպարյանն արձագանքեց, որ բարձրացված հարցը հիմնականում պետության անմիջական կարգավորման դաշտում չէ, այլ ավելի գործատուների, և անհրաժեշտ է հստակեցնել պետության կողմից թիրախավորող ռազմավարական ուղղությունները՝ պաշտպանության տեսանկյունից, օրինակ՝ նորությունները և անձի պաշտպանությունը:

Նախարարն ընդգծեց, որ պետությունը պետք է իրականացնի այն գործառույթները, որոնք մասնավոր հատվածը չի կարող կամ չպետք է իրականացնի, և նույն սկզբունքը կիրառելի է հակառակ դեպքում: Նա հավելեց, որ նման գործառույթները հնարավոր է կարգավորել նաև բիզնեսի կամ մասնավոր հատվածի միջոցով:

Լիլիթ Մուրադյանն առաջարկեց «դիփֆեյքերի» մասին օրենքում առանձին անդրադարձ կատարել տեսազանգերի կամ հեռախոսազանգերի միջոցով անձանց ձայնի և պատկերի ապօրինի օգտագործմանն, որը կարող է տագնապ առաջացացնել, ինչպես նաև օգտագործել գումար շորթելու նպատակով՝ ընդգծելով թե՛ իրազեկման արշավների, թե՛ օրենսդրական կարգավորման անհրաժեշտությունը:

Նախարարն արձագանքեց, որ բարձրացված հարցը արդեն իսկ ներառված է օրենքի փաթեթում:

Ամփոփելով նիստը՝ նախարարը նշեց, որ քննարկումը ցույց տվեց թիրախային հարցերի պատշաճ դիտարկումը: Ընդգծեց, որ հաջորդ նիստում կքննարկվեն ՀԽ անդամների կողմից առաջադրված այլ թեմաներ: Շնորհակալություն հայտնեց մասնակցության համար և նշեց հետադարձ կապի և համատեղ օրակարգի ձևավորման կարևորությունը՝ հորդորելով քննարկված հարցերի վերաբերյալ լրացուցիչ առաջարկները ներկայացնել նախարարությանը:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար — Մխիթար Հայրապետյան

Նախարարի առաջին տեղակալ (հասարակական խորհրդի հետ աշխատանքների համակարգող պաշտոնատար անձ) — Գևորգ Մանթաշյան

Նախարարի առաջին տեղակալի օգնական (հասարակական խորհրդի հետ աշխատանքների պատասխանատու պաշտոնատար անձ) — Մարիամ Մինասյան